ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կառավարության գործունեության արդյունքները 2020 թվականին և դերը երկրում սկսեղծված տնտեսական իրավիճակի կայունացման գործում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1
2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ 3
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ 6
   - 3.1. Բյուջեի եկամուտները 7
   - 3.2. Բյուջեի ծախսերը 10
   - 3.3. Բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը 16
   - 3.4. Հարկաբյուջետային կանոնների պահպանումը 17
4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 19
5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 21
6. ԱՄՓՈՓՈՒՄ 23

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականը չափազանց բարդ տարի էր՝ լի մի շարք բացասական և աննախադեպ իրադարձություններով, որոնց արդյունքում երկրում ստեղծվել են տնտեսական, սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական ճգնաժամեր: Բնականաբար, նման իրավիճակներում բավական կարևոր է պետության դերը ի հայտ եկած շոկերին արձագանքման և երկրում ստեղծված իրավիճակի կայունացման գործում: Հասարակությունը կառավարությունից ակնկալում է հաշվեկշռված, մասնագիտական գիտելիքի վրա հիմնված և իրավիճակին համապատասխան գործողությունների իրականացում, որոնք թույլ կտան չեզոքացնել արտաքին և դրանց հետևանքով առաջացող՝ նաև ներքին շոկերի ազդեցությունները և խուսափել աղետալի հետևանքներից:

Վերոհիշյալ գործողությունների իրականացումը, ինչպես նաև դրանց քանակական ցուցանիշները արտացոլվում են երկրի պետական բյուջեում: Հետևաբար, վերլուծելով 2020թ. պետական բյուջեի կատարողականը, հնարավոր է պատկերացում կազմել, թե կառավարությունն ինչպիսի գործողություններ է ձեռնարկել, ինչպես է արձագանքել և ինչ չափով է կարողացել մեղմել այնպիսի իրադարձությունների բացասական հետևանքները, ինչպիսիք էին COVID-19-ի համավարակի տարածումը, դրա հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը և Արցախյան պատերազմը:

Վերոհիշյալ իրադարձություններից առնվազն մեկի առկայության պարագայում ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքով նախատեսված է «բացառիկ դեպքի» հնարավորության առկայությունը, ինչը թույլ է տալիս կառավարությանը հատուկ դեպքերում (տնտեսական ճգնաժամ, բնական աղետներ, պատերազմ և այլն) շեղվել հարկաբյուջետային կանոնների պահպանումից: 2020թ. տեղի է ունեցել այդ երևույթներից միանգամից երկուսը՝ տնտեսական ճգնաժամը (կապված COVID-19-ի համավարակի տարածման հետևանքների հետ և պատերազմը: Հետևաբար, կառավարությունը 2020թ. «բացառիկ դեպքի» հիմնավորմամբ չի պահպանել հարկաբյուջետային կանոնները՝ իրականացնելով տնտեսական հնարավորությունները գերազանցող ընթացիկ ծախսեր՝ դրանց մի մասը ֆինանսավորելով պարտքի միջոցով:

Ընթացիկ ծախսերի և բյուջեի պակասուրդի աճը պայմանավորված էր նաև կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ: Ընդհանուր առմամբ, միայն COVID-19-ի համավարակի բացասական սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմման նպատակով կառավարությունը հենց համավարակի տարածման սկզբից հայտարարել է շուրջ 150 մլրդ դրամի չափով միջոցառումների իրականացման մասին, իսկ մի քանի ամիս անց դրան գումարվել

է նաև հարկային միջոցառումները, որոնց գծով տնտեսավարողներին աջակցության նախատեսված չափը կազմում էր շուրջ 65 մլրդ դրամ: Սակայն, տարվա արդյունքներով, հայտարարված 215 մլրդ դրամից (150+65) իրականացվել է ընդամենը 164.8 մլրդ դրամի միջոցառումները, ինչի արդյունքում չի հաջողվել ապահովել կառավարության կողմից սպասվող տնտեսական արդյունքը:

Արդյունքում, ՀՆԱ-ի անկումը, պետական բյուջեի պակասուրդի ավելացումը, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը 2020 թվականին հանգեցրել են ՀՀ կառավարության պարտքի բեռի կտրուկ ավելացմանը: Մասնավորապես, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.5%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 13.4 տոկոսային կետով և հատելով հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը:

2020 թվականի արդյունքներով տնտեսական զարգացումների և կառավարության գործողությունների առավել մանրամասն ուսումնասիրության համար սույն աշխատանքում կատարվել է 2020թ. մակրոտնտեսական զարգացումների և պետական բյուջեի ցուցանիշների վերլուծություն՝ համեմատելով վերջիններս 2020թ. բյուջեով նախատեսված, ինչպես նաև նախորդ տարիների փաստացի ցուցանիշների հետ: Վերլուծության համար հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2020թ. պետական բյուջեի հաշվետվությունը, իսկ մակրոտնտեսական զարգացումների նկարագրության համար հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված ցուցանիշները:

2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ

2020թ. զարգացումները շեղվել են բոլոր կանխատեսումներից, քանի որ 2019թ. դրությամբ անհնարին էր պատկերացնել COVID-19-ի համավարակի տարածումը և դրա հետևանքները: Աշխարհի գրեթե բոլոր երկրների համար 2020թ. ընթացքում պարբերաբար վերանայվել են տնտեսական կանխատեսումները անկման ուղղությամբ: 2020 թվականին փաստացի գրանցվել է համաշխարհային տնտեսության 3.3% անկում, այն դեպքում երբ 2019 թվականի վերջում կանխատեսվում էր 3.4% աճ:

Հայաստանում նույնպես 2020 թվականի զարգացումները ուղեկցվել են COVID-19-ի համավարակի տարածմամբ և դրա բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներով: Համավարակի տարածման կանխարգելման նպատակով ՀՀ կառավարության կողմից մարտ ամսի վերջերից սկսեցին կիրառվել մի շարք սահմանափակումներ, որոնց հետևանքով ապրիլին տնտեսական ցուցանիշների միտումները կտրուկ վատթարացան, իսկ սահմանափակումների մեծ մասի վերացումից հետո՝ մայիս ամսից սկսեց գրանցվեց անկման տեմպի դանդաղում: Սակայն, սահմանափակումների ժամանակ ոչ արդյունավետ գործողությունների արդյունքում կառավարությանը չհաջողվեց նվազեցնել համավարակի տարածման տեմպը: Հետագայում համավարակի երկրորդ ալիքի, ինչպես նաև սեպտեմբերի վերջից սկսված Արցախյան պատերազմի բացասական տնտեսական ազդեցություններով պայմանավորված՝ ՀՀ տնտեսության անկման տեմպերը տարեվերջին խորացան: Արդյունքում, 2020 թվականին գրանցվեց համաշխարհային տնտեսական անկումից մոտ 2 անգամ ավելի խոր՝ 7.4% տնտեսական անկում՝ 2020 թվականի պետական բյուջեով կանխատեսված 4.9% տնտեսական աճի փոխարեն՝ լինելով տարածաշրջանում, ինչպես նաև գործընկեր երկրների շարքում ամենախոր տնտեսական անկումը: 2020թ. անվանական ՀՆԱ-ն կազմել է 6,181.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 6,543.3 մլրդ դրամի նկատմամբ նվազելով շուրջ 361.6 մլրդ դրամով:

Իրական ՀՆԱ-ի 7.4% անկումը պայմանավորված է եղել տնտեսության բոլոր ճյուղերի՝ ծառայությունների (ներառյալ առևտրի) (5.1 տոկոսային կետ), գյուղատնտեսության (0.5 տոկոսային կետ), շինարարության (0.4 տոկոսային կետ) և արդյունաբերության (0.3 տոկոսային կետ) համապատասխանաբար 9.7%-ով, 4.1%-ով, 6.7%-ով և 1.7%-ով անկմամբ:

Ճգնաժամի ամենամեծ հարվածը բաժին է հասել ծառայությունների և առևտրի ճյուղերին, որոնցում արձանագրվել է խոր անկում: Ծառայությունները նվազել են 8.7%-ով, իսկ առևտրի շրջանառությունը՝ 13.2% ով: Միևնույն ժամանակ,

տարվա ընթացքում աճել են ծառայությունների և առևտրի ոլորտների վարկավորման ծավալները (պայմանավորված կառավարության հակճգնաժամային միջոցառումների իրականացմամբ), ինչը որոշակիորեն մեղմել է ճյուղերի նվազման տեմպը:

Գծապատկեր 1. Տնտեսության ճյուղերի և ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների նպաստումները տնտեսական աճին, տոկոսային կետ





2020 թվականին անկում է գրանցվել նաև արդյունաբերության ոլորտում, որը կազմել է 1.7 տոկոս: Ընդ որում, նվազումը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 3.6% անկմամբ (նպաստումը կազմել է -2.3 տոկոսային կետ), իսկ հանքարդյունաբերությունը աճել է 8.4%-ով և 1.5 տոկոսային կետով հակազդել է ընդհանուր արդյունաբերության նվազմանը:

2020թ. բացասական իրադարձությունների արդյունքում նվազել են նաև սպառումը և ներդրումները: Սպառումն իրական արտահայտությամբ նվազել է 10.1%-ով, ինչը բացատրվում է տնօրինվող եկամտի նվազմամբ և տնտեսությունում առկա անորոշություններով: Կապիտալ ներդրումները[1] նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ նվազել են 8.6%-ով՝ պայմանավորված մասնավոր ներդրումների նվազմամբ:

[1] Ներկայացված է հիմնական միջոցների համախառն կուտակում ցուցանիշը՝ հաշվի առնելով, որ 2019 թվականից ՀՀ ՎԿ-ի կողմից համախառն կուտակման մեջ հաշվառվող նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության մեջ ներառվում են նաև վիճակագրական շեղումները:

Տնտեսական անկման պայմաններում տեղի է ունեցել գների աճի արագացում՝ հատկապես 2020 թվականի դեկտեմբերից սկսած, երբ 12-ամսյա գնաճը կտրուկ արագացել է և կազմել 3.7%՝ հիմնականում պայմանավորված առաջարկի գործոններով (ՀՀ դրամի արժեզրկմամբ և միջազգային գների աճով):

2020 թվականին արձանագրվել է արտահանման նվազում՝ հիմնականում պայմանավորված համավարակի հետևանքով տնտեսությունում արտադրության կրճատմամբ և արտաքին պահանջարկի նվազմամբ: Չնայած 2020 թվականի տարեսկզբի աճի բարձր տեմպերին՝ 2020 թվականին դոլարային արտահայտությամբ ՀՀ ապրանքների արտահանումը կրճատվել է 3.9%-ով: Ներմուծման ծավալները նվազել են ավելի բարձր տեմպով՝ 17.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ավտոմեքենաների ներմուծման ծավալների նվազմամբ և համավարակի ու Արցախյան պատերազմի հետևանքով տնտեսական ակտիվության անկման պայմաններում ներքին պահանջարկի նվազմամբ:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

2020 թվականի պետական բյուջեի փաստացի ցուցանիշների միտումները պայմանավորված են ոչ միայն բյուջեի պլանով և կառավարության որոշումներով, այլ նաև տնտեսական իրավիճակի վատթարացման ազդեցություններով: Մասնավորապես՝ 2020թ. տեղի է ունեցել բյուջեի եկամուտների կրճատում 0.3%-ով, սակայն անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ անկման հետևանքով եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը բարելավվել է 1.3 տոկոսային կետով (առավել մանրամասն ներկայացված է «Բյուջեի եկամուտները» բաժնում):

Բյուջեի ծախսերի գծով արձանագրվել է կառավարության որոշումներով պայմանավորված ծախսերի աճ, իսկ ՀՆԱ-ի նվազման պայմաններում ավելի է մեծացել ծախսերի կշիռը ՀՆԱ-ում: Այսպես, ծախսերի ծավալը 2019-ի համեմատ աճել է 16.1%-ով, իսկ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 5.7 տոկոսային կետով:

Ծախսերի աճի արդյունքում, 2020թ. կտրուկ աճել է պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ կազմելով 5.4% և նախորդ տարվա համեմատ լինելով 4.4 տոկոսային կետով ավելի մեծ:

Գծապատկեր 2. Պետական բյուջեի հիմնական ցուցանիշները 2016-2020 թվականներին





Տնտեսական անկման պայմաններում, համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը եղել է շուրջ 5.0% խթանող՝ ի սկզբանե պլանավորված 2.2% խթանող լինելու փոխարեն: Խթանման

չափի մեծացումը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեի ծախսերի աճով, որոնք պարունակել են ինչպես բյուջեով պլանավորված, այնպես էլ ճգնաժամի ընթացքում մշակված և իրականացված միջոցառումների գծով ծախսեր:

Գծապատկեր 3. Հարկաբյուջետային ազդակը 2016-2020 թվականներին, %



3.1. Բյուջեի եկամուտները

2020 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 25.2%-ը՝ նախորդ տարվա 23.8%-ի դիմաց, իսկ հարկերը և տուրքերը՝ ՀՆԱ-ի 22.4%-ը՝ նախորդ տարվա համեմատ մնալով անփոփոխ: Բյուջեի եկամուտների՝ ՀՆԱ-ի նկատմամբ աճը պայմանավորված է եղել ոչ հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների աճով: Վերջիններս էլ աճել են 2020թ. բացասական իրադարձությունների հետևանքով: Մասնավորապես՝ ոչ հարկային եկամուտների ցուցանիշն իր մեջ ներառում է «Հայաստան» համահայկական հիմնադրամից գումարների փոխանցումը պետական բյուջե, իսկ դրամաշնորհների աճը կապված է COVID-19-ի հակազդման միջոցառումների իրականացման համար միջազգային դրամաշնորհների ստացումով:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 2016-2020 թվականներին, % ՀՆԱ-ում



Հարկային եկամուտների մասով ՀՆԱ-ի նկատմամբ կշիռը չի փոխվել, ինչը դրական երևույթ է ճգնաժամի պայմաններում (սովորաբար տնտեսական անկման պայմաններում այդ ցուցանիշը վատթարանում է), սակայն հաշվի առնելով 2019թ. զգալի բարելավումը, որոշակի իներցիոն բարելավում ակնկալվում էր նույնիսկ այդ պայմաններում: Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ հարկային վարչարարության բարելավման տեմպը 2020թ. դանդաղել է:

Բյուջեի փաստացի ցուցանիշները, բնականաբար, զգալիորեն շեղվել են նախնական պլանից: Տարվա ընթացքում մակրոտնտեսական կանխատեսումները և բյուջեի սպասվող ցուցանիշները մի քանի անգամ վերանայվել են՝ հիմնականում վատթարացման ուղղությամբ: Ճշտված պլանը նույնպես կրել է զգալի փոփոխություններ: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների ճշտված պլանը կազմել է 1,563.1 մլրդ դրամ, որը կատարվել է 99.8%-ով: Հարկային եկամուտների ճշտված պլանը գերակատարվել է 0.3%-ով, և փաստացի մուտքերը կազմել են 1,385.2 մլրդ դրամ՝ ճշտված պլանով ծրագրավորված 1,380.8 մլրդ դրամի փոխարեն: Սակայն, 2020թ. բյուջեով սահմանված նախնական պլանի համեմատությամբ հարկային եկամուտները եղել են 217.1 մլրդ դրամով (13.5%-ով) պակաս:

Պաշտոնական դրամաշնորհների փաստացի ծավալը նույնպես գերազանցել է 2020թ. բյուջեով նախատեսված ծավալը, սակայն զգալի չափով ավելի ցածր է եղել ճշտված պլանի ցուցանիշից՝ թերակատարվելով 14.1%-ով: Նպատակային դրամաշնորհների կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է ծրագրերի կատարման ցածր աստիճանով:

2020 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են ավելի քան 122.2 մլրդ դրամ՝ 1.6%-ով (1.9 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ճշտված պլանը: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների կատարողականով: Նախնական պլանի նկատմամբ, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ այլ եկամուտների գծով արձանագրված 37.7% կամ 33.4 մլրդ դրամ աճը հիմնականում պայմանավորված է այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտների աճով (այս ձևակերպումը վերաբերում է «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե փոխանցված գումարներին):

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտների ծավալը և կատարողականը 2020 թվականին

մլրդ դրամ	Տարեկան պլան[2]	Տարեկան ճշտված պլան[3]	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,695.0	1,563.1	1,560.7	99.8%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,602.3	1,380.8	1,385.2	100.3%
Պաշտոնական դրամաշնորհներ	35.3	61.9	53.2	85.9%
Այլ եկամուտներ	57.4	120.3	122.2	101.6%

Հարկային եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել շահութահարկի (նվազումը՝ 17.9%), մաքսատուրքի (նվազումը՝ 28.3%) և պետական տուրքի (նվազումը՝ 27.1%) գծով մուտքերի անկումներով, որոնց նպաստումը ընդհանուր հարկերի նվազմանը կազմել է համապատասխանաբար 2.2, 1.8 և 0.8 տոկոսային կետ:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը և հարկատեսակների նպաստումները, 2019թ.

մլրդ դրամ	2019		2020	
	Աճ, %	Նպաստում, տոկոսային կետ	Աճ, %	Նպաստում, տոկոսային կետ

[2] Հաստատված է «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

[3] Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

Հարկային եկամուտներ և տուրքեր	**16.6**	**16.6**	**-5.4**	**-5.4**
այդ թվում՝				
Ավելացված արժեքի հարկ	10.9	3.7	-0.6	-0.2
Ակցիզային հարկ	29.5	2.3	-3.1	-0.3
Եկամտահարկ	22.0	5.9	0.2	0.1
Շահութահարկ	9.3	1.2	-17.9	-2.2
Մաքսատուրք	18.6	1.2	-28.3	-1.8
Բնապահպանական, բնօգտագործման վճար	8.1	0.3	-8.9	-0.4
Շրջանառության հարկ	54.1	0.8	-8.3	-0.2
Այլ հարկային եկամուտներ	2.8	0.1	11.8	0.4
Պետական տուրք	21.1	0.6	-27.1	-0.8

Շահութահարկի նվազումը հիմնականում պայմանավորված է 2020թ. երկրորդ եռամսյակում իրականացված շահութահարկի գծով հիմնարար փոփոխություններով, որոնց նպատակն է եղել շահութահարկի կարգավորումները դարձնել տնտեսական շրջափուլի կոնկրետ տարվա զարգացումներին համարժեք արձագանքող, ինչը համավարակի ազդեցությամբ բնորոշվող 2020թ. համար նշանակում էր նաև օժանդակություն շահութահարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների շրջանառու ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրների լուծմանը: Ըստ կատարված փոփոխությունների՝ ամբողջությամբ վերանայվել է շահութահարկի կանխավճարների համակարգը, և, բացի այդ, սահմանվել է, որ 2020 թվականի երկրորդ եռամսյակի համար տնտեսավարող սուբյեկտները շահութահարկի կանխավճարներ կարող են չիրականացնել: Այդ տրամաբանությամբ շահութահարկի գծով մուտքերի ամենամեծ նվազումը եղել է 2020թ. երկրորդ եռամսյակում: Ընդհանուր առմամբ, ըստ կառավարության գնահատականների, կատարված փոփոխությունների արդյունքում տնտեսությունում «թողնվել է» (պակաս է հավաքագրվել) շուրջ 70 մլրդ դրամ:

3.2. Բյուջեի ծախսերը

2020թ. բացասական իրադարձությունները ստիպել են կառավարությանը իրականացնել լրացուցիչ ծախսեր, սակայն, միևնույն ժամանակ, կառավարությունը չի կրճատել տնտեսական ճգնաժամի պայմաններում ոչ անհրաժեշտ ծախսերը: Դրա արդյունքում, պետական բյուջեի ծախսերի աճը պայմանավորվել է ինչպես պետական բյուջեով բնականոն իրավիճակի համար նախատեսված, այնպես էլ հակաճգնաժամային միջոցառումների և ռազմական գործողությունների հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի կարիքով:

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականին աճել է 5.7 տոկոսային կետով՝ կազմելով 30.6%, որում ընթացիկ ծախսերի կշիռն աճել է 5.0 տոկոսային կետով (կազմելով 27.0%), իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ ծախսերի (կապիտալ ծախսերի) կշիռն աճել է 0.7 տոկոսային կետով (կազմելով 3.7%): Ընդ որում, կապիտալ ծախսերի 3.7%-ից 0.9%-ը Արցախյան պատերազմով պայմանավորված ռազմական լրացուցիչ ծախսերն են: Եթե դա հաշվի չառնենք, քանի որ դրանք չեն ուղղվել տնտեսության ներուժի բարձրացմանը, ապա կապիտալ ծախսերի մակարդակը կկազմի 2.8%՝ լինելով նախորդ տարվա մակարդակից ցածր: Կապիտալ ծախսերը տնտեսության ներուժային մակարդակի խթանման համար կառավարության լավագույն գործիքն է, իսկ ճգնաժամերի պայմաններում այդ գործիքի դերը ավելի է մեծանում: Մինչդեռ 2020թ. տնտեսական անկման պայմաններում կրճատվել է տնտեսությանն ուղղվող կապիտալ ծախսերի մակարդակը, որը ինչպես բացասաբար է անդրադարձել տվյալ տարվա, այնպես էլ կանդրադառնա հաջորդ տարիների տնտեսական աճի տեմպի վրա:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերը 2016-2020 թվականներին, % ՀՆԱ-ում



2020 թվականին պետական բյուջեի ծախսերը անվանական արժեքով կազմել են 1894.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.3%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 1668.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.1%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 226.2 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 227.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 18.0%-ով, որում ներառված են նաև Արցախյան պատերազմով պայմանավորված ռազմական

ծախսերը: Կրկին պետք է շեշտել կապիտալ ծախսերի նվազման փաստը. այսպես, կապիտալ ծախսերն առանց այդ ռազմական ծախսերի նախորդ տարվա նկատմամբ նվազել են շուրջ 10.3%-ով:

Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է եղել սոցիալական նպաստների և կենսաթոշակների շուրջ 23.4% աճով (նպաստումը ընդհանուր ծախսերի աճին՝ 6.5 տոկոսային կետ), որն էլ իր հերթին պայմանավորված է կորոնավիրուսի հետևանքների հակազդման միջոցառումների շրջանակներում, ինչպես նաև Արցախյան պատերազմով պայմանավորված ծախսերի աճով:

Ծախսերի աճին զգալի նպաստում են ունեցել նաև 283.4 մլրդ դրամի չափով փաստացի իրականացված «այլ ծախսերը», որոնց աճը 2019-ի համեմատ կազմել է 43.6%, և որոնք ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 5.2 տոկոսային կետով: Ընդ որում, այս ծախսերի առավել մանրամասն բացվածքը պետական բյուջեի կատարման հաշվետվությունում չի ներկայացվում: Նշվում է միայն, որ այլ ծախսերի տարեկան ծրագիրն ավելացվել է 26.8 մլրդ դրամով՝ պայմանավորված կորոնավիրուսային վարակի կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների ֆինանսավորման անհրաժեշտությամբ, ինչպես նաև ռազմական դրությամբ: Սակայն, այլ ծախսերը աճել են 85.2 մլրդ դրամով, հետևաբար, եթե նույնիսկ հանենք պլանի ճշգրտումը, ապա շուրջ 58.4 մլրդ դրամի չափով գումարի ավելացումը մնում է չբացատրված:

Աղյուսակ 3. Պետական բյուջետային ծախսերի կատարողականը <u>տնտեսագիտական</u> դասակարգմամբ, 2020թ.

մլրդ դրամ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,855.7**	**1,989.0**	**1,894.6**	**95.3%**
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**1,568.0**	**1,721.7**	**1,668.5**	**96.9%**
Աշխատանքի վարձատրություն	177.7	177.9	176.1	99.0%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	180.2	187.6	179.2	95.5%
Տոկոսավճարներ	168.1	166.8	164.8	98.8%
Սուբսիդիաներ	115.2	126.0	119.1	94.5%
Դրամաշնորհներ	158.9	198.8	186.9	94.0%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	501.6	571.4	559.1	97.8%
Այլ ծախսեր	266.2	293.0	283.4	96.7%

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**287.7**	**267.4**	**226.2**	**84.6%**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	287.7	268.2	227.7	84.9%
Հիմնական միջոցներ	287.7	268.2	227.7	84.9%
Շենքեր և շինություններ	239.5	230.6	201.2	87.3%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	44.1	34.5	24.1	70.0%
Այլ հիմնական միջոցներ	4.1	3.1	2.3	74.3%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(0.0)	(0.9)	(1.5)	171.7%

2020թ. ընթացիկ ծախսերի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 96.9%, որը պայմանավորված է ծախսային գրեթե բոլոր հոդվածների թերակատարմամբ: Ընդ որում, ընթացիկ ծախսերի առանձին տարրերի շարքում կատարողականի ամենաբարձր ցուցանիշն է արձանագրվել պետական համակարգի աշխատակիցների աշխատանքի վարձատրության գծով հոդվածը (99.0%), այն դեպքում, երբ պետական մարմիններում առկա են եղել բազմաթիվ թափուր հաստիքներ: Այդ ցուցանիշը վկայում է, որ աշխատանքի վարձատրության համար նախատեսված և խնայված գումարները բաժանվել են բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց՝ որպես պարգևավճար:

2020 թվականին կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը պահպանվել է, և կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 84.6%՝ նախորդ տարվա 73.3%-ի համեմատ: Ընդ որում, հիմնականում թերակատարվել են արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերը, որոնց կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 56.7% (2019 թվականին այդ ցուցանիշը կազմել էր 56.1%):

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերի կատարողականը <u>գործառնական</u> դասակարգմամբ, 2020թ.

մլրդ դրամ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2019-ի նկատմամբ, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,855.7**	**1,989.0**	**1,894.6**	**95.3%**	**16.3**
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	361.7	361.9	344.3	95.2%	7.6

Պաշտպանություն	308.0	400.5	387.8	96.8%	22.9
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	152.5	154.4	151.4	98.1%	5.4
Տնտեսական հարաբերություններ	195.4	152.1	125.6	82.6%	12.2
Շրջակա միջավայրի պաշտպանություն	12.3	6.0	4.4	73.3%	-23.9
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	22.9	16.2	8.9	55.1%	-45.2
Առողջապահություն	113.7	151.7	148.2	97.7%	49.3
Հանգիստ, մշակույթ և կրոն	30.9	35.5	33.6	94.8%	0.2
Կրթություն	161.1	151.2	143.8	95.1%	11.2
Սոցիալական պաշտպանություն	492.0	559.6	546.6	97.7%	20.4
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	5.1	0.1	-	0.0%	-

2020թ. նախորդ տարվա համեմատ զգալիորեն աճել են առողջապահության, պաշտպանության և սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերը՝ համապատասխանաբար 49.3%, 22.9% և 20.4%: Նման աճերը պայմանավորված են տարվա ընթացքում ի հայտ եկած իրադարձություններով, և հիմնականում հետևանք են բյուջեի պլանի դեպի վերև ճշգրտման: Մասնավորապես՝ առողջապահության ուղղվող ծախսերի պլանն ավելացվել է 37.9 մլրդ դրամով, պաշտպանության ծախսերը՝ 92.5 մլրդ դրամով, իսկ սոցիալական պաշտպանությանը՝ 67.5 մլրդ դրամով: Սակայն, ինչպես գրեթե բոլոր ծրագրերը, նշված ծախսերը նույնպես թերակատարվել են միջին հաշվով շուրջ 2.6%-ով:

Միևնույն ժամանակ, ծախսերի կարիքի կտրուկ աճի պայմաններում, բյուջեի այլ հոդվածների գծով նշանակալի վերաբաշխումներ չեն իրականացվել: Օրինակ, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով պլանավորված գումարների նվազում տեղի չի ունեցել, ինչը անհասկանալի է, քանի որ այս հոդվածով են նախատեսվում պետական կառավարման մարմինների ծախսերը, որոնք 2020թ. ընթացքում բավական երկար ժամանակահատված աշխատել են հեռավար՝ ձևավորելով խնայողություններ: Բացի այդ, համավարակի հետևանքով միջոցառումների մի շարք տեսակներ հնարավոր չի եղել իրականացնել

(գործուղումներ, ընդունելություններ և այլն) որոնց գծով, սակայն, նույնպես չի իրականացվել ծախսերի պլանի վերանայում:

Հատկանշական է, որ տնտեսական ճգնաժամի պայմաններում ծախսերի պլանի դեպի ներքև վերանայում է իրականացվել «տնտեսական հարաբերություններին» ուղղվող ծախսերի գծով, որոնց գծով նախատեսված 195.4 մլրդ դրամ գումարը ճշտվել է 43.3 մլրդ դրամով և կազմել 152.1 մլրդ դրամ: Վերջինս մեծամասամբ պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի ոլորտին ուղղվող միջոցների շուրջ 35.9 մլրդ դրամով կրճատմամբ: Տնտեսական ճգնաժամի առկայության պայմաններում առավել ընկալելի կլիներ տեսնել տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի աճ կամ առնվազն անփոփոխ մակարդակ, սակայն, դրանք նվազել են՝ ավելի վատթարացնելով տնտեսական իրավիճակը:

Ծրագրային բյուջետավորումը ՀՀ-ում

2020 թվականի պետական բյուջեն, ՀՀ ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումներին համապատասխան, ներկայացված է նաև ծրագրային դասակարգմամբ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 175 ծրագրերի իրականացում 46 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: ՀՀ կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 181, որոնցից փաստացի միջոցներ են օգտագործվել 178-ի գծով, իսկ ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 1000 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 942-ը կամ 94.2%-ը:

Սակայն պետք է նշել, որ բյուջեի հաշվետվությունում ծրագրերի կատարման փաստի վերաբերյալ դատողությունները հիմնված են դրանց գծով նախատեսված գումարների ծախսման ցուցանիշի վրա: Մինչդեռ, ծրագրային բյուջետավորումը ենթադրում է նաև ոչ ֆինանսական ցուցանիշների առկայություն, որոնք պետք է հիմք հանդիսանան ծախսված գումարների արդյունքների գնահատման համար: Այսինքն՝ կառավարությունը պետք է յուրաքանչյուր ծրագրի գծով սահմաներ ծրագրի արդյունքները բնութագրող կատարողական չափորոշիչներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ գնահատել, թե որքանով են արդյունավետ ծախսվել հատկացված գումարները: Այդպիսի չափանիշներ առկա չեն, ինչը նշանակում է,

որ ծրագրային բյուջետավորման ներդրումը դեռևս ամբողջական չէ, քանի որ ծրագրային դասակարգմամբ ներկայացված բյուջետային ծախսերի արդյունավետությունը հնարավոր չէ գնահատել:

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը ևս կազմվել է ծրագրային բյուջետավորման ձևաչափով, սակայն այդ փաստաթղթում նույնպես բացակայում են ծրագրերի արդյունքները բնութագրող կատարողական չափորոշիչները: Այդ պարագայում, հաջորդ տարի նույնպես հնարավոր չի լինի գնահատել ծախսված գումարների արդյունավետությունը: Հետևաբար, կարող ենք փաստել, որ ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ կառավարության քայլերը շատ դանդաղ են, և այդ համակարգը, իր բոլոր բաղադրիչներով, դեռևս ձևավորված չէ:

3.3. Բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը

2020 թվականի տնտեսական անկման հետևանքով տեղի է ունեցել պետական բյուջեի պակասուրդի կտրուկ աճ, որը պայմանավորված է մի կողմից՝ հարկային եկամուտների նվազմամբ, մյուս կողմից՝ ծախսերի աճով: Բյուջեի պակասուրդի աճը և տնտեսական անկումը հանգեցրել են նաև կառավարության պարտքի բեռի կտրուկ աճի:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները

մլրդ դրամ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	**160.7**	**426.0**	**334.0**	**78.4%**
Ներքին աղբյուրներից	**211.3**	**422.7**	**359.4**	**85.0%**
Արտաքին աղբյուրներից	**(50.6)**	**3.2**	**(25.4)**	**-**

2020 թվականի ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 334.0 մլրդ դրամ պակասուրդ՝ նախորդ տարվա 63.9 մլրդ դրամի համեմատ: ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 5.4%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.4 տոկոսային կետով:

Պակասուրդի ֆինանսավորումը 2020թ. նախատեսված է եղել իրականացնել ներքին աղբյուրների՝ հիմնականում արժեթղթերի (պետական պարտատոմսերի) թողարկումից և տեղաբաշխումից զուտ մուտքերի հաշվին: Արտաքին աղբյուրներից նախատեսված շուրջ 171.8 մլրդ դրամ վարկը նախատեսվել էր ուղղել նախորդ տարիներին ստացված վարկերի և փոխատվությունների մարմանը և

ֆինանսական ակտիվների ձեռքբերմանը, որի արդյունքում արտաքին աղբյուրների գծով դեֆիցիտի ֆինանսավորումը բացասական է պլանավորվել՝ 50.6 մլրդ դրամի չափով (նախատեսվել է ներքին ռեսուրսների հաշվին մարել արտաքին պարտքը կամ ձեռք բերել ֆինանսական ակտիվներ):

2020թ. զարգացումներով պայմանավորված՝ պակասուրդի ֆինանսավորման փաստացի ցուցանիշները շեղվել են պլանից, սակայն հիմնական տրամաբանությունը պահպանվել է: Այսպես, պակասուրդը ֆինասավորվել է ներքին ռեսուրսների հաշվին, սակայն, պարտատոմսերի զուտ տեղաբաշխումը նախատեսված 141.1 մլրդ դրամից դարձել է 299.6 մլրդ դրամ՝ աճելով ավելի քան 2 անգամ: Արտաքին աղբյուրների կազմում վարկերի և փոխատվությունների պլանը ճշգրտվել է դեպի վերև՝ 171.8 մլրդ դրամից դառնալով 235.4 մլրդ դրամ, սակայն փաստացի ստացվել է ընդամենը 203.8 մլրդ դրամը, ինչի արդյունքում ճշտված պլանով նախատեսվել է 3.2 մլրդ դրամի չափով արտաքին ռեսուրսներից ֆինանսավորում, որը սակայն փաստացի կազմել է -25.4 մլրդ դրամ: Արտաքին աղբյուրների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման փաստացի ցուցանիշների շեղումը պլանից կապված է նաև COVID-19-ի տնտեսական հետևանքների հակազդմանն ուղղված հակաճգնաժամային այն միջոցառումների հետ, որոնց ֆինանսավորումն իրականացվել է պետական բյուջեից վարկավորման միջոցով:

2020 թվականի ընթացքում COVID-19-ի համավարակի տարածման հետևանքով տնտեսական անկման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է էական խթանող: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2020 թվականին նախորդ տարվա համեմատ ունեցել է 5.0 ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների (0.5) և ծախսերի ընդլայնող (4.5) ազդեցություններով: Ընդ որում, հարկաբյուջետային ազդակն էապես մեծ է ինչպես նախորդ տարվա չեզոք, այնպես էլ պետական բյուջեով ծրագրված 2.2 խթանող ազդակի համեմատ:

3.4. Հարկաբյուջետային կանոնների պահպանումը

Համավարակի հետևանքով առաջացած իրավիճակը և Արցախյան պատերազմը համարելով բացառիկ դեպք (ինչն արտացոլվել է «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին հավանություն տալու վերաբերյալ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի (587-Ա) և սեպտեմբերի 29-ի (N 1600-Ա) որոշումներում), հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.3-րդ կետին համապատասխան)

2020 թվականին հնարավոր է եղել շեղվել պարտքի և ծախսերի բնականոն իրավիճակի համար գործող տրամաբանությունից. բյուջեի պակասուրդը եղել է ավելի մեծ, քան կապիտալ ծախսերն են, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը:

Այդպիսով, կապիտալ ծախսերի կանոնից կառավարությունը շեղվել է շուրջ 107.8 մլրդ դրամով (ՀՆԱ-ի 1.7%-ի չափով), իսկ ընթացիկ ծախսերի կանոնից շեղումը կազմել է շուրջ 206.0 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 3.3%-ի չափով): Դա նշանակում է, որ շուրջ 107.8 մլրդ դրամի չափով ներգրավված պարտքը ուղղվելու է ոչ թե կապիտալ, այլ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: Ընթացիկ ծախսերի կանոնից շեղումը նշանակում է, որ ընթացիկ ծախսերը եղել են տնտեսության կայուն հնարավորություններից (որը չափվում է նախորդ յոթ տարիների ՀՆԱ-ների անվանական աճերի միջին արժեքով) առավել:

Վերոհիշյալ երևույթը շարունակվել է նաև 2021 թվականին, ինչը նշանակում է, որ կառավարությունը երկու տարի անընդմեջ ընթացիկ ծախսերի զգալի մասը ֆինանսավորում է պարտքի հաշվին:

4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,164.3 մլրդ դրամ (7,968.5 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 67.4%-ը: ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՀ պետական պարտքի ցուցանիշներն աճել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար 18.6%-ով և 8.8%-ով: Դա պայմանավորված է եղել 2019 թվականի տարեվերջի և 2020 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքների տարբերությամբ, որը փոփոխվել է 8.9%-ով՝ 479.70-ից աճելով մինչև 522.59: ՀՀ պետական պարտքում 3,923.9 մլրդ դրամը (7,508.5 մլն ԱՄՆ դոլարը) կամ ՀՆԱ-ի 63.5%-ը կազմել է ՀՀ կառավարության պարտքը, 240.4 մլրդ դրամը (459.9 մլն ԱՄՆ դոլարը) կամ ՀՆԱ-ի 3.9%-ը՝ ՀՀ ԿԲ պարտքը:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 652.2 մլրդ դրամով (647.2 մլն ԱՄՆ դոլարով): Դա հիմնականում պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով, որն աճել է 19.7%-ով, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքն աճել է 2.4%-ով: Դոլարային արտահայտությամբ կառավարության պարտքն աճել է 9.9%-ով, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը նվազել 6.0%-ով:

ՀՆԱ-ի անկումը, պետական բյուջեի պակասուրդի ավելացումը, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը 2020 թվականին հանգեցրել են ՀՀ կառավարության պարտքի բեռի ավելացմանը: Մասնավորապես, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.5%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 13.4 տոկոսային կետով և հատելով հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը:

2020 թվականին գործող «բացառիկ դեպքի» կարգավորումները հնարավորություն են տվել կառավարությանը ներգրավված պարտքը օգտագործել ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար: Դրա արդյունքում, պարտքի աճը չի նպաստել տնտեսության ներուժի բարձրացմանը, ինչը ևս պատճառ է հանդիսացել 2021թ. տնտեսական աճի ցածր սպասումների ձևավորման համար: Պետք է նշել, որ նույն պատճառներով պայմանավորված «բացառիկ դեպքի» կարգավորումները տարածվելու են նաև 2021 թվականին, և հարկաբյուջետային կանոնները չեն պահպանվելու: Արդյունքում, ևս մեկ տարի պարտքի գումարները կուղղվեն ընթացիկ ծախսերի իրականացմանը՝ չստեղծելով հետագա տարիներին պարտքի մարման հնարավորություններ: Այդ պայմաններում տեղի կունենա պարտք/ՀՆԱ հարաբերակցության զգալի աճ, քանի որ ՀՆԱ-ի աճը չի արագանա պարտքի ներգրավման պայմաններում:

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պարտքը 2016-2020 թվականներին



5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

COVID-19-ի հետևանքների հակազդմանն ուղղված հարկաբյուջետային միջոցառումները բաղկացած են եղել համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրերի փաթեթից, հարկային բարեփոխումներից ու առողջապահական ծախսերից:

COVID-19-ի համավարակի տարածմամբ պայմանավորված տնտեսական խոր անկումը կանխելու, ինչպես նաև հետագա վերականգնումը խթանելու նպատակով կառավարությունը 2020 թվականին պետական բյուջեից ուղղակիորեն ելքեր ենթադրող միջոցառումների գծով (ծախսերով կամ ֆինանսավորման աղբյուրներով գործառնություններ) նախատեսել էր իրականացնել 150 մլրդ դրամ (2020թ. փաստացի ՀՆԱ-ի 2.4%-ի չափով) գնահատվող սոցիալ-տնտեսական աջակցության ծրագիր՝ հետևյալ պայմանականորեն բաժանված հիմնական ուղղություններով.

- 30 մլրդ դրամ՝ տնտեսավարողներին աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են ընթացիկ իրացվելիության խնդիրների լուծմանը,
- 30 մլրդ դրամ՝ սոցիալական աջակցության ծրագրեր,
- 80 մլրդ դրամ՝ տնտեսության վերականգնման և երկարաժամկետ զարգացմանն ուղղված մասնավոր ներդրումների ներգրավման ծրագրեր,
- 10 մլրդ դրամ՝ պահուստային միջոցներ անհրաժեշտ վերաբաշխումներ իրականացնելու համար:

Վերոհիշյալ միջոցառումների շրջանակներում 2020 թվականին փաստացի ծախսվել է 39.0 մլրդ դրամ, իսկ բյուջեից վարկավորումը կազմել է 19.4 մլրդ դրամ, որոնք միասին կազմում են ՀՆԱ-ի 0.95 տոկոսը: Մասնավորապես, սոցիալական աջակցության ծրագրերի գծով հատկացվել է 26.0 մլրդ դրամ, իսկ տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տրամադրվել է 32.4 մլրդ դրամ (որից 13.0 մլրդ դրամը բյուջեի ծախսերի աճի միջոցով, իսկ 19.4 մլրդ դրամը՝ դեֆիցիտի ֆինանսավորման գործառնությունների (ներքին վարկավորման) միջոցով):

Հատկանշական է, որ երկարաժամկետ տնտեսական զարգացմանն ուղղված, 80.0 մլրդ դրամ նախապես ծրագրավորված ծավալով միջոցառումները 2020 թվականի ընթացքում չեն իրականացվել: COVID-19-ի համավարակի տարածման կանխարգելման առողջապահական ազդեցությունների մեղման նպատակով կառավարությունն իրականացրել է նաև լրացուցիչ առողջապահական ծախսեր, որոնց ծավալը դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է մոտ 36.4 մլրդ դրամ (ներառյալ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերը):

Բացի վերոհիշյալ ծրագրերից, կառավարության հակաճգնաժամային արձագանքը ներառել է նաև շահութահարկի կանխավճարի գծով հիմնարար փոփոխությունները, որոնց միջոցով աջակցություն է ցուցաբերվել շահութահարկ վճարող տնտեսավարող սուբյեկտներին՝ շրջանառու ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրների լուծման նպատակով, որի ընդհանուր ծավալը սկզբնական շրջանում գնահատված 65 մլրդ դրամի փոխարեն ներկայումս գնահատվում է շուրջ 70 մլրդ դրամի չափ (որից տնտեսության մեջ թողնված շահութահարկի կանխավճարները 2020 թվականին կազմել են մոտ 52.0 մլրդ դրամ):

Արդյունքում հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումների չափը 2020 թվականին կազմել է 164.8 մլրդ դրամ (39.0+19.4+36.4+70.0) կամ ՀՆԱ-ի 2.7%-ը:

Համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված տնտեսական, սոցիալական և հարկային միջոցառումների ամբողջական իրականացման արդյունքում ակնկալվում էր նվազեցնել ՀՆԱ-ի անկումը շուրջ 2.1 տոկոսային կետով: Սակայն, դրանց զգալի մասի չիրականացման (մասնավորապես 80 մլրդ դրամի չափով տնտեսական վերականգնմանն ուղղված ծրագրերի գծով) արդյունքում, թուլացել է նաև կառավարության ընդհանուր հակաճգնաժամային արձագանքի չափը՝ 2.1 տոկոսային կետից դառնալով 1.3 տոկոսային կետ: Իրական արտահայտությամբ, հակաճգնաժամային միջոցառումների դրական ազդեցությունը սպասվող 143.5 մլրդ դրամի փոխարեն կազմել է 90.1 մլրդ դրամ:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

2020թ. բավական բարդ տարի էր՝ լի բազմաթիվ բացասական իրադարձություններով, որոնք ունեցել են զգալի բացասական ազդեցություն տնտեսության վրա՝ առաջացնելով խոր ճգնաժամ: Այսպես, 2020թ. ՀՀ-ում գրանցվել է տարածաշրջանում, ինչպես նաև գործընկեր երկրների շարքում ամենախոր տնտեսական անկումը՝ կազմելով 7.4 տոկոս: Ավելին, տնտեսության հնարավորությունների նվազման հետևանքով, ցածր է նաև 2021 թվականի տնտեսական աճի սպասումները, ինչն արտացոլվել է նաև միջազգային կառույցների կանխատեսումներում: Այսպես՝ 2021թ. համար ԱՄՀ կողմից ՀՀ-ում կանխատեսվում է ընդամենը 1.0% տնտեսական աճ, որն ամենացածրն է տարածաշրջանի երկրների համար ԱՄՀ կանխատեսումների շարքում:

Կառավարության արձագանքը 2020թ. բացասական տնտեսական անկմանը համարժեք և բավարար չի եղել: 2020թ. արձանագրված 7.4% տնտեսական անկման պայմաններում կառավարության մշակած ամբողջական հակաճգնաժամային ծրագիրը, ըստ կառավարության գնահատականների, միտված էր մեղմելու անկումն ընդամենը 2.1 տոկոսային կետով: Փաթեթը կլիներ համարժեք տնտեսական իրավիճակին, եթե այն նախատեսեր առնվազն կիսով չափ կամ ավելի շատ մեղմել տնտեսական անկումը: Հետևաբար ակնհայտ է, որ մշակված հակաճգնաժամային փաթեթը եղել է անհամաչափ և նույնիսկ ամբողջական իրականացման դեպքում հնարավորություն չէր տա նշանակալիորեն մեղմել տնտեսական անկումը (քանի որ կմեղմվեր ընդամենը 2.1 տոկոսային կետով, իսկ տնտեսական անկումը կկազմեր 5.3% (7.4 - 2.1), ինչը նույնպես բավական բարձր է): Սակայն, փոքր և անհամարժեք լինելուց զատ, հակաճգնաժամային փաթեթն ամբողջությամբ չի իրականացվել նախատեսվածի չափով: Առավել կարևոր՝ երկարաժամկետ տնտեսական զարգացմանը միտված ծրագիրը չի իրականացվել, ինչի արդյունքում հարկաբյուջետային փաթեթի ազդեցությունը եղել է զգալիորեն ավելի փոքր, քան նախատեսված էր (1.3 տոկոսային կետ՝ 2.1-ի փոխարեն):

Կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը պահպանվել է նույնիսկ ճգնաժամային տարում: Բացի վերոհիշյալ կետում նշված թերացումից, որի հետևանքով ակնհայտորեն հետաձգվել է տնտեսական վերականգնումը, կառավարությանը նաև չի հաջողվել ամբողջությամբ իրականացնել պլանավորված կապիտալ ծախսերը, ինչի պատճառով ևս հետաձգվել է տնտեսական վերականգնումը, ինչպես նաև նվազել է դրա տեմպը: Ավելին, տնտեսությանն ուղղվող կապիտալ ծրագրերի ծավալը նվազել է նախորդ տարվա նկատմամբ, ինչն ակնհայտորեն խոսում է այն մասին, որ կառավարության կողմից կապիտալ

ծախսերի իրականացման անկարողության խնդիրը ոչ միայն չի լուծվում տարիներ շարունակ, այլ նաև ավելի է խորանում:

Կառավարության պարտքը կտրուկ աճել է՝ հատելով օրենքով սահմանված սահմանային շեմը: Ընթացիկ ծախսերի գծով անհրաժեշտ վերանայումներ չիրականացնելու, ընթացիկ ծախսերը պարտքով ֆինանսավորելու, անարդյունավետ քաղաքականության արդյունքում տնտեսական խոր անկման, ինչպես նաև փոխարժեքի արժեզրկման պայմաններում 2020 թվականին ՀՀ կառավարության պարտքի բեռը կտրուկ աճել է՝ կազմելով ՀՆԱ-ի 63.5%-ը և նախորդ տարվա նկատմամբ աճելով 13.4 տոկոսային կետով: Կառավարության պարտքն արդեն հատել է հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը, սակայն ըստ 2021թ. բյուջեի մասին օրենքի հիմքում դրված կանխատեսումների՝ այն շարունակելու է աճել նաև 2021 թվականին՝ մեծացնելով հարկաբյուջետային կայունության ռիսկերը: Նման քաղաքականության շարունակության պարագայում (ընթացիկ ծախսերի պարտքով ֆինանսավորում, կապիտալ ծախսերի թերակատարում) այդ ռիսկերն ավելի կառարկայանան իրենց աղետալի հետևանքներով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*